

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
ՄՄ

ՎԱՅԵՐԵՆ ՅՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ԻՆՎԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲՆԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԵՐ

Հայերեն հնատիպ գրքերի հիշատակարանների առանձին ժողովածու առ այսօր չունենք: Անշուշտ, տարբեր առիթներով դրանք հիմնականում հրատարակվել են, սակայն շատ տարբեր այն սկզբունքներից, որոնցով լույս են տեսել Հայերեն ձեռագրերի հիշատակարանները¹: Սկզբունքների տարբերության եւ հիշատակարանների առանձնահատկությունները հիմնականում չպահպանելու պատճառով «Հայ գիրքը» մատենագիտությունը² չի կարող բավարարել այսօրվա մեր պահանջները: Բնավ, նպատակ չունենք նսեմացնել այդ գիրքը պատրաստողների կատարած հսկայածավալ աշխատանքը եւ մեծ ջանքերը: Նրանց նպատակը ոչ թե հիշատակարանների հրատարակումն է եղել, այլ աշխարհով մեկ սփռված Հայերեն տպագիր գրքերի հայտնաբերումն ու արձանագրումը: Այդ իսկ պառճառով այստեղ հիշատակարանները բերվել են ոչ թե ամբողջապես, այլ այնքանով, որքանով դրանք առնչվում են տպագրության հետ: Իսկ չունենալով Հայերեն տպագիր գրքերի ամբողջական եւ ճշգրտված հիշատակարանների ժողովածու՝ հնարավոր չէ իրականացնել դրանց թե՛ լեզվաբանական եւ թե՛ ընդհանուր պատմամշակութային քննություն:

Հայերեն հնատիպ գրքերի հիշատակարանների ամբողջական ժողովածու ունենալու անհրաժեշտությունը կարելու է մի քանի առումով: ԺՁ.-ԺԷ. դդ. Հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, պատմամշակութային

¹ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ե.-ԺԲ. դարեր, աշխ.՝ Ա. Մաթեոսյանի, Երեւան, 1988. ԺԳ. դար, Երեւան, 1984. «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երեւան, 1950. ԺԵ. դար, հտ. Ա., Երեւան, 1955, հտ. Բ., Երեւան, 1958, հտ. Գ., Երեւան, 1967: «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ», կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, հտ. Ա., Երեւան, 1974, հտ. Բ., Երեւան, 1978, հտ. Գ., կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1984:

² Տե՛ս «Հայ գիրքը 1512-1800 թթ.», աշխ.՝ Ն. Ոսկանյանի, Բ. Կորկոսյանի, Ս. Սավալյանի, Երեւան, 1988 (այսուհետեւ՝ «Հայ գիրքը»):

կյանքում տեղի ունեցող վայրիվերումները թույլ չէին տալիս զբաղվել գիտությունով: Արդյունքում անկում է ապրում հայ գիտական միտքը, այդ թվում՝ ձեռագրարվեստը: Առ այսօր տպագրված չունենք նաև ԺԶ. դարի ձեռագրերի հիշատակարանների առանձին ժողովածու: Այս պարագայում առավել կարեւորվում է նույն տարիների հայերեն հնատիպ գրքերի հիշատակարանների ժողովածուի պատրաստման անհրաժեշտությունը, որից հետո միայն կարող ենք անդրադառնալ դրանց լեզվաբանական ուսումնասիրությունը:

Հայերեն հնատիպ գրքերի հիշատակարանների լեզվական առանձնահատկությունների քննության ընթացքում³ հանգեցինք նրան, որ հայերեն հնատիպ գրքի մատենագիտության վրա հիմնվել չենք կարող եւ որ անպայման անհրաժեշտ է այս գրքի ունեցածը համեմատել բուն՝ հնատիպ գրքերի հետ եւ ստանալ սրբագրված-ճշգրտված ու լրացված բնագրեր: Նախապես սկզբնաղբյուր ընդունած՝ «Հայ գրքում» առկա հիշատակարանները համեմատելով բուն գրքերի հետ՝ նկատեցինք մի շարք ոչ ճիշտ ընթերցումներ, տեխնիկական թերություններ, սրանց զուգահեռ կային հիշատակարանների կրճատումներ. ընդ որում՝ կրճատված էին ոչ միայն փառատրական, այլև աստվածաբանական հարցերին վերաբերող, ազգակցական հարաբերություններ նշող հատվածները, երկար թվարկումները, լրացուցիչ տեղեկությունները: Բացի այս, կային հիշատակարաններ, որոնք հնատիպ գրքերում եղած նյութին չէին համապատասխանում. այսպես՝ 1565-1566 թթ. Վենետիկում Աբգար Դպիր Թոխաթեցու տպագրած Սաղմոսարանի («Հայ գրքի» 7-րդ միավորը) հիշատակարանի որոշ հատվածներ տարբերություններ ունեն բուն գրքի ունեցածի համեմատ⁴:

Մեր աշխատանքի դեպքում, բնականաբար, հնարավոր անսխալ պատկեր ստանալու եւ նույնպիսի մեկնաբանումներ անելու համար ամբողջական եւ ճիշտ ընթերցված հիշատակարաններ ունենալը կարեւոր եւ անհրաժեշտ նախապայման է: Հակառակ դեպքում «Հայ գրքում» առկա թերությունները՝ բնագրային եւ բառային աղավաղումները, կարող էին մեր աշխատանքին սխալ ընթացք եւ թյուր մեկնաբանություններ տալ:

Ուրեմն, առաջին հերթին պետք էր գտնել անհրաժեշտ հնատիպ գրքերը եւ համեմատություն-սրբագրությունը կատարել ըստ դրանց. հնարա-

³ Այս աշխատանքի առիթը մեր ասպիրանտական թեման է՝ «Հայ հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն. ԺԶ.-ԺԷ. դդ.»:

⁴ Բուն գրքում չկան, ուստի եւ՝ «Հայ գրքում» ավելորդ են «ընդ հովանեսու սուրբ Մարկոս ատեսարանչին, ի ժամանակ Սիովսի», «գառաջինք եւ զվերջինքն», «ԲԾԸԲ. թուխտ է եւ ամմէն կոխած է եւ իսկի գրչի գիր չկայ ի գիրքս. բաւ է» հատվածները:

վորույթյան դեպքում սա արել ենք նույնիսկ այն պարագայում, երբ «Հայ գրքում» մի շարք միավորների նկարագրությունն արված է ըստ Գարեգին Զարբհանյանի «Պատմություն հայկական տպագրության...»⁵, «Հայկական մատենագիտություն»⁶, Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն»⁷ եւ այլ աշխատությունների, ինչպես նաեւ՝ «Սիոն»-ում (1967 թ.) լույս տեսած հիշատակարանների⁸: Այս հնարավորությունը մենք ստացել ենք Հայաստանի Ազգային գրադարանի կայքում (www.nla.am)⁹ դրված՝ գրքերի համակարգչային պատճենների, անհրաժեշտության դեպքում նաեւ՝ Մատենադարանի գրադարանի գրքերից:

Համեմատությունները երբեմն տարբերություններ էին արձանագրում նույնիսկ միեւնույն նյութի՝ երկուսից ավելի հեղինակների արած ընթերցումների մեջ: Օրինակ, երբ որեւէ միավորի հիմք էինք ընդունում բուն բնագիրը¹⁰ եւ նրա հետ համեմատում «Հայ գրքում» եւ Գ. Զարբհանյանի կամ ուրիշների՝ վերը նշված աշխատություններում առկա բնագրերը, ապա նկատում էինք միեւնույն բառի մի քանի ընթերցում: Այսպես՝ հանդիպած բազում օրինակներից բերենք մի քանիսը.

Զարբհանյան, Հայկական մատենագիտություն	Հայ գիրք
էջ 599՝ գերեւանեցի	էջ 39՝ գերեւանցի
էջ 599՝ խնդրէր ի նմանէ եօթն հարիւր հնգերասան մատչիլ փոխ	էջ 39՝ խնդրէր ի նմանէ չ ե ժե. մատչիլ փոխ
էջ 599՝ տացէ	էջ 39՝ տայցէ
էջ 600՝ եթէ տացես զտպարանդ... Սուրբ Սարգսին, լինիմք եւ ընկեր, եւ տամ զփողս	էջ 39՝ եթէ տացես զտպարանդ... Սուրբ Սարգսին. եւ տամ զփողս

⁵ Գ. Զարբհանյան, Պատմություն հայկական տպագրության..., Վենետիկ, 1895:

⁶ Գ. Զարբհանյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883:

⁷ Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան հայ կեանքի, հտ. Ա., Վենետիկ, 1909, հտ. Բ., Վենետիկ, 1912:

⁸ Տես նաեւ՝ Ա. Գալայճեան, Յուդեակ եւ յիշատակարաններ Երուսաղեմի Գալուստ Կիւպէնկեան Մատենադարանի հայերէն հնատիպ գիրքերու (1512-1800), Երուսաղեմ, 1985 (արտատպուած Սիոն ամսագրէն 1967-1972):

⁹ Այս առումով անգնահատելի են Ազգային գրադարանում կատարված եւ կատարվող աշխատանքները:

¹⁰ Նկատի ունենք հնատիպ գիրքը:

Բնականաբար այս կացությունն անտեսելը ճիշտ չէր լինի, քանզի տարնթերցումները, հիշատակարանների կրճատումները, մեծածավալ հատվածների բացթողումները, տեխնիկական սխալները կհանգեցնեին տվյալ ժամանակաշրջանում գործող լեզվական երեւույթների սխալ պատկերացման եւ առավել սխալ մեկնությունների: Հաշվի առնելով այս ամենը՝ անհրաժեշտություն առաջացավ ունենալ ճշգրտված բնագրեր, որոնք ավելի անսխալ կներկայացնեին իրենց ժամանակի լեզվական (հնչյունաչին, ձեւակազմական, բառային եւ այլն) պատկերը:

Հնատիպ այն գրքերը, որոնք չկան Ազգային գրադարանի կայքէջում, ինչպես նաեւ ձեռքի տակ չենք ունեցել, մեր միակ հիմքը մնացել է «Հայ գրքում» հղված աղբյուրը. նկատենք, որ այս դեպքում արդեն մեր արձանագրած միավորների տարբերությունը նույնությամբ թողել ենք ըստ հղված աղբյուրի՝ նկատի ունենալով, որ նա է հիմք եղել Հայ գրքի տվյալ միավորի նկարագրության համար:

Մի շարք գրքերի նկարագրություններ արված են եղել մանրաժապավեններից եւ լուսանկարներից: Տեղեկանալով, որ դրանք արդեն տարիների հեռավորությունից գրեթե անընթեռնելի են դարձել, հարկ համարեցինք թողնել՝ ըստ «Հայ գրքում» եղածի, հակառակ դեպքում կարող էինք սխալ պատկեր ստանալ¹¹:

Այժմ անդրադառնանք հիշատակարանների բնագրերի սկզբունքին. նախօրինակ-բնագիրը կազմել ենք հետեւյալ կերպ.

1. Նախ՝ առանձնացրել եւ գրի ենք առել «Հայ գրքում» հիշատակարան պարունակող (եւ այդ բնույթի) բոլոր միավորները՝ տալով դրանց հերթական համարներ, այնուհետեւ՝ «Հայ գրքում» զբաղեցրած դրանց կարգային համարը, էջը, հնատիպ գրքի վերնագիրն իր անհրաժեշտ տվյալներով (տպարան, տպագրիչ եւ այլն): Դրանք դասդասել ենք տարեթիվերի աճման կարգով: Վերջում բերել ենք հիշատակարանն իր էջով (եթե իհարկե ունի):

2. Բառանջատումները, կետադրությունը եւ ուղղագրությունը «Հայ գրքում» արված են անհետեւողական. երբեմն բերված է ըստ հիմք-օրի-

¹¹ Ի դեպ, ցանկալի, եւ կարծում ենք ճիշտ կլիներ, որ Ազգային գրադարանն աշխատանքներ աներ արդեն գործածությունից գրեթե դուրս մնացած լուսանկարների եւ մանրաժապավենների փոխարեն համապատասխան վայրերից մեզ հասած այդ ժապավենների թվայնացված տարբերակները ձեռք բերելու համար:

նակի¹², երբեմն էլ՝ ըստ ժամանակաշրջանի ընդունված օրենքների, չնայած որ հեղինակների բնորոշմամբ «պահպանված են ուղղագրությունը, կետադրությունը, նաեւ վրիպակներն ու սխալները»¹³: Մեր կազմած օրինակում առաջնորդվել ենք հայոց լեզվի ներկայումս ընդունված կետադրության եւ բառանջատման կանոններով:

ա) Ինչպես գիտենք, դեռեւս ձեռագիր մատյաններում հիմնականում տեղ խնայելու, ինչպես նաեւ այլ նկատառումներով բառանջատում հաճախ չի արվել: Վաղ միջնադարից սկսած՝ աստիճանաբար նկատելի են դառնում բառերի անջատ գրություններ, թեեւ որոշ ժամանակ պահպանվում է նաեւ կցագրությունը: Այն հանգամանքը, որ սկզբնական շրջանում հայերեն տպագիր գրքերը ձեռագիր մատյանների ավանդույթների անմիջական կրողը եւ շարունակողն են եղել, հայերեն հնատիպ գրքերն իրենց հիմնական առանձնահատկություններով նմանվել են ձեռագիր մատյաններին:

Բացառությունն չէ նաեւ բառանջատումը, որը շատ անկանոն էր՝ երբեմն հասկանալի, իսկ շատ հաճախ՝ անհասկանալի պատճառներով: Առաջին հայացքից թվում է, թե նման շեղումներն արված են տեղի խնայողություն պատճառով: Սակայն փոքր-ինչ ուշադիր լինելիս նկատում ենք, որ բառերը հաճախ ոչ միայն կից են գրված, այլ երկու (եւ երբեմն՝ ավելի) բառ միասին գրված լինելուց բացի, նրանցից յուրաքանչյուրը մասերի է բաժանվում բոլորովին անհարկի եւ սխալ տեղում. օրինակ՝ այլևեղեւ, իթվին, ըստիւրաքանչ իւր, բոլորիցեղականաց, Սպահանասարտաւ ձայնի եւ բազում նման օրինակներ, կամ 1513 թ. տպագրված Պատարագատետրը ընդհանրապես բառանջատում չունի, իսկ 1642 թ. Նոր Զուղայում տպագրված Ժամագրքում էլ բառանջատումը շատ անկանոն է արված եւ այլն: Նման դեպքերում հարց է առաջանում. տպագրիչն այդ կերպ վարվելով ի՞նչ խնդիր է ցանկացել լուծել. արդյո՞ք տեղի խնայողության խնդիրն է եղել¹⁴, թե՞ չի մացուցության եւ անհետեւողականության

¹² Նկատի ունենք այն բնագրերը, որոնք հիմք են հանդիսացել «Հայ գրքի» հիշատակարանների ստուգման համար՝ ըստ «Հայ գրքում» նշված հղում-ծանոթագրությունների, բացառությամբ մի քանիսի, որոնք գտել ենք Ազգային գրադարանի կայքէջում:

¹³ Տե՛ս «Հայ գիրքը», էջ XVII:

¹⁴ Հին մատյաններում, ինչպես եւ արձանագրություններում, բառանջատում չանելը պայմանավորված էր նաեւ գաղտնիությամբ՝ ծածկագրությամբ. դրա համար երբեմն մատյաններում, իսկ ավելի հաճախ արձանագրություններում գործածվում էր նաեւ փակագրությունը:

արդյունք է դա: Եթե բառանջատման նման դրսեւորումը լիներ միայն տողաչարի վերջում, ապա կարելի էր ենթադրել, որ դա արված է տողաչափը պահելու նպատակով, բայց՝ ոչ. դա նկատելի է տողաչարի տարբեր մասերում: Եվ եթե տպագրիչը տարածք խնայելու նպատակ է ունեցել, այդ դեպքում ինչո՞ւ անհարկի արված բացատները չի օգտագործել ճիշտ տեղում եւ անհրաժեշտ ձեւով: Կամ, միգուցե, տպագրիչը, հետեւելով գրչագիր մատյաններին եւ չխորանալով բուն բնագրի բովանդակության մեջ, բառանջատմանը ուշադրություն չի դարձրել:

Շատ հաճախ հնատիպ գրքում կից գրություն են ունեցել ի, առ եւ այլ նախդիրները, եւ շաղկապը, օժանդակ բայերը եւ իրար հետ կապ չունեցող, անջատ գրություն պահանջող բառեր: Կամ զ, ըստ նախդիրները, ներ-, ըն- նախամասնիկները հանդիպում են ե՛լ կից, ե՛ւ անջատ գրությամբ: Նշենք նաեւ, որ կան հիշատակարաններ, որտեղ գործում են բառանջատման հստակ կանոններ: Թերեւս այս հարցը մնում է անհասկանալի, կամ բացատրելի է գրաչարի հմտության չափ-մակարդակով:

բ) Կետադրությունը եւս, ինչպես բուն բնագրում, այնպես էլ «Հայ գրքում», անկանոն է, շատ հաճախ՝ ոչ տեղին տրոհումներով, կամ հակառակը՝ անհրաժեշտ տեղում բացակայում է որեւէ կետադրություն:

գ) Ինչ վերաբերում է ուղղագրությանը, ապա հետեւել ենք բուն բնագրին եւ հիմք-օրինակին, քանի որ նման անկանոնություններն են վեր հանում տվյալ ժամանակաշրջանի լեզվական որակները՝ ցույց տալով բառերի կրած պատմական, անցումային փոփոխությունները, որոնց արձանագրումն ու քննությունն էլ մեր ուսումնասիրության առանցքն ու հենքն են: Որպես այլընթերցում՝ տողատակում հղել ենք գլխավորապես «Հայ գրքի» շեղում-սխալները:

1. Մեծատառի գործածությունը ե՛ւ հնատիպ գրքերում, ե՛ւ «Հայ գրքում» անկանոն է, նույնիսկ վերջակետից հետո եղած դիրքում: Այստեղ եւս առաջնորդվել ենք արդի հայերենի ընդունված կանոններով, բացառությամբ ամսանունների. պատճառն ըստ ավանդույթի՝ տոմարական գրքերում հին հայոց, հռոմոց եւ այլ ազգերի ամսանունների բազմատեսակությունը մեծատառով գրելն է:

2. Մեր բնագրի վերարտադրության ժամանակ վիճելի էր նաեւ եւ-ի (Եւ, եւ) գրության հարցը, քանի որ այն հանդիպում էր թե՛ միագիր եւ թե՛ երկգիր ձեւով՝ և-ով, եւ-ով, Եւ-ով: Համեմատության համար հիմք եղած տարբերակներում բոլոր վերջակետերից հետո հանդիպում էր Ե՛ւ անկախ նրանից՝ այդտեղ վերջակետի կարիք կա՞ր, թե՞ ոչ: Մեր տարբերակում Եւ

գրել ենք միայն վերջակետից հետո, մնացած բոլոր դեպքերում՝ եւ: Այնտեղ, որտեղ բառամիջում հանդիպել ենք ն եւ եւ, պահպանել ենք:

3. Տողադարձի ժամանակ հանդիպող վանկարար ը գիրը բոլոր դեպքերում անտեսել ենք (օր. ըգ-Գրիգոր = գ Գրիգոր, ըգ-կենդանիս = գկենդանիս, անըս-պառ = անսպառ, ըշ-տեմարանաց = շտեմարանաց, ըս-տորակայեալս = ստորակայեալս):

4. Համառոտագրված՝ «պատիւի» (ւ) նշանով բառերը, ի տարբերութիւն «Հայ գրքի», գրել ենք ամբողջական՝ առանց վերականգնման որեւէ լրացուցիչ նշանի:

5. Բոլոր այն հատվածները, որոնք բացակայում էին «Հայ գրքում», բայց կային հնատիպ գրքերում, գրել ենք մեր վերարտադրած օրինակում՝ առնելով ուղղանկյուն փակագծերի մեջ ([]), իսկ «Հայ գրքում» եղած «հավելյալ» հատվածները պարզապես դուրս ենք թողել:

Մեր բնագրերում, բացի «Հայ գրքում» գրված Հիշատակարան միավորից, ներառել ենք նաեւ Հիշատակութիւն, Հիշատակագրութիւն, Մաղթանք, Առաջաբան, Առ ընթերցողս, Ծանուցում..., Տրակ առ ընթերցողս, Պատճառ եւ նախերգանք գրոցս, Առ համայն ընթերցողս... եւ այլ նման միավորներ, որոնք հիշատակարանային բնույթի են: Նշենք, որ այս եւ հիշատակարան միավորների միջեւ մինչ օրս չի արվել իմաստային հստակ սահմանազատում: Հատկապես, հիշատակարան եւ հիշատակագրութիւն (հիշատակութիւն) տերմինները, հաճախ լինելով ուսումնասիրութիւն կենտրոնում, տարբեր մեկնաբանութիւնների առիթ են տվել¹⁵: Ըստ Ա. Աբրահամյանի «...Եթե գրիչը անմիջապես իր կողմից է գրել, այդ կոչվում է հիշատակարան, իսկ եթե այդ գրված է տարիներ հետո այլ անձնավորութիւն կողմից, նա կոչվում է հիշատակագրութիւն»¹⁶: Հ. Բախչինյանը չի ընդունում այս սահմանումը, քանի որ միայն հեղինակային պատկանելութեամբ առաջնորդվելը սխալ է, եւ հարցին մոտենում է բո-

¹⁵ Հիշատակագրություն եզրը փոքր-ինչ այլ ընդգրկում ունի Ն. Պողոսյանի «Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ (1512-1712)» աշխատության մեջ (Երեւան, 2012): Այստեղ հեղինակը, հետեւելով հիշատակարան եւ հիշատակագրություն եզրերի՝ հայագիտության մեջ վարդուց ի վեր ընդունված սահմանմանը (ի դեպ, հեղինակն այս աշխատությանը բնորոշ եզր է համարում հիշագրություն-ը (տես ծանոթ. 3), գործածում է հիշատակագրություն բառը: Սակայն հեղինակն այստեղ հավաքել է ոչ միայն այդ դարերի հնատիպ գրքերում եղած ձեռագիր հիշատակագրությունները, որոնք միայն հիշատակարանային բնույթ ունեն, այլեւ զանազան գրություններ, որոնք նվիրատվություններ, ուղղում-սրբագրություններ, աղոթքներ, բարեմաղթանքներ են եւ այլն (տես էջ 5-11):

¹⁶ Ա. Աբրահամյան, Հայ գրի եւ գրչության պատմություն, Երեւան, 1959, էջ 379-380:

վանդակուծության, ծավալի տարբերությունների տեսանկյունից՝ գրելով. «Ճիշտ է, հիշատակարանների մեծ մասը գրիչներն են հեղինակել, եւ հետագա հիշատակագիրների խոսքը հաճախ պարփակվել է հիշատակագրությունների մեջ, բայց, ինչպես տեսանք, գոյություն ունեն նաեւ հետագա հիշատակարաններ, որոնք ամենեւին չեն նույնանում հիշատակագրությունների հետ: Բացի այդ, իրենք՝ գրիչներն էլ հիշատակարանից բացի իրենց ընդօրինակած ձեռագրերի տարբեր մասերում թողել են նաեւ բազմաթիվ հիշատակագրություններ: Հետեւաբար, թե՛ գրիչները եւ թե՛ հետագա հիշատակագիրները գրել են ինչպես հիշատակարաններ, այնպես էլ հիշատակագրություններ»¹⁷: Ըստ հեղինակի, ինչպես նաեւ «Հայ գրքում» եղած այս միավորների առնչությամբ մեր կատարած քննությունների, հանգեցրինք նրան, որ հիշատակագրությունները ծավալով ավելի փոքր են, բովանդակությամբ աղքատ, մեծ մասամբ գրչության ընթացքին վերաբերող փոքրիկ տեղեկություններ են, որոնք լրացնում եւ հարստացնում են բուն հիշատակարանների բովանդակությունը. դրանք «բուն հիշատակարանների «Յիշեցէ՛ք» հատվածի բեկորներն են՝ ցրված ձեռագրերի լուսանցքներում եւ բացատներում»¹⁸: Օրինակ՝ «Հայ գրքում» հիշատակագրություն համարված հետեւյալ գրությունները՝ «Յիշեսձիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ո՛վ հանդիպողք, զաշխատողս ի սմա (էջ 60): Աւգնեսա Սուրբ Հոգի աշխատողացս (էջ 129): Սաղմոս ի Դաւիթ. Աւգնեսա Սուրբ Հոգի հասանել յաւարտ (էջ 268): Զաշխատողս ի սմա զնուաստ ինչատուր վարդապետս եւ զվարպետ Յակոբձանն, եւ զյանապատիս միաբանքն, որ բազում աշխարությունք հազիւ կարացաք զայս չափս ի յայտ բերել թվին ՌՁԷ. (էջ 341)» («Հայ գիրք», էջ 22, հմր 30), կամ «Տպեցաւ սաւատս ի Նոր Զուղա, ի թուին հազար հարիւր քառասուն եւ երկու, ւ յամսեանն Մայիսի ի մէկն» («Հայ գիրք», էջ 114, հմր 152) եւ բազում նման գրություններ, որոնք կարող էին նաեւ «Հայ գրքի» հեղինակների կողմից հիշատակարաններ համարվել:

Հիշատակարան եւ հիշատակագրություն (հիշատակություն) եզրերի առնչությամբ Հ. Բախչինյանի տեսակետը, կարծում ենք, դեռեւս միակ ընդունելի է: Այս սահմանազատումը մեզ չի խանգարում, որպեսզի մեր նախօրինակ-բնագրում հիշատակագրությունները դիտենք հիշատակարանի մաս եւ զետեղենք այնտեղ՝ պահպանելով հանդերձ հիշատա-

¹⁷ Հ. Բախչինյան, Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Երեւան, 1980, էջ 41:

¹⁸ Անդ, էջ 41-42:

կազմակերպություն (հիշատակություն) անվանումը: Ի լրումն այս տեսակետի, հավելենք, որ այսօր ձեռագրերի գիտական նկարագրության ժամանակ, անկախ բովանդակությունից, ծավալից եւ գրչության ժամանակից, հիշատակարանային գրությունները համարում ենք հիշատակարան՝ անվանելով դրանք գրչության ժամանակի եւ հետագայի հիշատակարաններ:

Մինչեւ ժէ. դարի 40-ական թթ. հնատիպ գրքերում հանդիպում ենք միայն հիշատակարանների (հիշատակագրություն, հիշատակություն): Պայմանավորված քաղաքական, տնտեսական կյանքով՝ Հայաստանում ժՁ. դարում գրչությունն անկում է ապրում, իսկ ժէ. դարին այն կրկին աշխուժանում է, սակայն հիշատակարանը, որպես այդպիսին, այլեւս չի զարգանում: Ժէ. դարի 40-ական թթ. հիշատակարաններին զուգահեռ հնատիպ գրքերում հանդես են գալիս նաեւ հիշատակարանային բնույթի այլ գրություններ: Տպագրիչները տպագրության ընթացքի, դժվարությունների, ժամանակի հոգեւոր եւ աշխարհիկ տիրակալների եւ այլնի մասին տեղեկություններ են հայտնում նաեւ գրքերի Առաջաբան, Ծանուցում, Ծանոթություն, Առ ընթերցողս..., Տրակ առ ընթերցողս... հատվածներում: Սրանք դրվում են տպագիր գրքերի սկզբում կամ վերջում¹⁹:

Երբեմն Ծանուցման հատվածները «Հայ գրքի» կազմողները համարել են հիշատակարան, երբեմն՝ ոչ. հաշվի առնելով այս երկակիությունը, ինչպես նաեւ այն, որ դրանց հեղինակը նույն անձն է՝ տպագրիչը, եւ ժամանակաշրջանն էլ նույնն է, բոլոր նման հատվածները զետեղել ենք մեր բնագրի մեջ: Բացի այս, հայերեն հնատիպ գրքերով զբաղվող այլ անհատներ եւս այդ միավորների մի մասը համարել են հիշատակարան: Ավելին՝ բովանդակային ընդհանրություն կա նաեւ վերը թվարկած միավորների եւ հիշատակարանի միջեւ. մեր նման մոտեցումը կարող ենք բացատրել նաեւ այլ փաստերով.

ա. «Հայ գրքի» կազմողների առանձնացրած Հիշատակություն, Հիշատակագրություն միավորները կարծեք թե Հիշատակարան մեծ միավորի առանձին փոքրիկ հատվածներ են, իսկ Մաղթանքը նույն Հիշատակարան մեծ միավորի վերջին հատվածի նմանությունն ունի, որտեղ տպագրիչը խնդրում է հիշել իրեն եւ իր հարազատներին: Հետեւաբար, սրանք որպես

¹⁹ Հավանաբար, հնատիպ գիրքն իբրեւ նախօրինակ ընդունելով՝ ԺԸ.-ԺԹ. դդ. որոշ հայ մատենագիրներ իրենց հիշատակարաններն անվանել են «Վերջաբանական յիշատակարան», «Ծանուցում», «Ծանօթութիւն», «Համառօտ վերջաբան» եւ այլն (Տեն Յ. վրդ. Տաշեան, Յուցակ հայերէն ծեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 364, 621, 788, 924, 998):

առանձին միավոր դիտելը եւ հիշատակարանների շարքից դուրս թողնելը ճիշտ չէր լինի²⁰:

բ. Ինչ վերաբերում է Առաջաբան, Առ ընթերցողան, Ծանուցում... եւ այլ խորագրերով միավորներին, ապա սրանք եւս անկարելի էր անտեսել՝ հաշվի առնելով նախ՝ բովանդակային ընդհանրությունը հիշատակարանի հետ, այնուհետեւ այն հանգամանքը, որ ձեռագիր մատյանների ստեղծման սկզբնական շրջանում հիշատակարանները, որպես այդպիսին, եղել են նաեւ նյութի սկզբում՝ խորագրում կամ առաջաբանում²¹: Այնինչ գիտենք, որ հնատիպ գիրքը, հատկապես սկզբնական շրջանում, իր կառուցվածքով եւ նույնիսկ տառաձեւերի ընտրությամբ, նկարագարումամբ նմանվում էր ձեռագիր մատյանին:

Հաշվի առնելով վերը նշված բոլոր հանգամանքները, ինչպես նաեւ չբացառելով վերջին քառորդ դարում նոր գրքեր գտնված լինելու փաստը, կարծում ենք անհրաժեշտ է ունենալ հայերեն հնատիպ գրքի մի նոր՝ առավել ամբողջական, մանրամասն ու ճշգրիտ նկարագրություններ պարունակող մատենագիտություն՝ նախապես մշակելով եւ ճշտելով նկարագրման սկզբունքը, թերեւս աչքի առաջ ունենալով նաեւ ձեռագրերի նկարագրության փորձը: Ինչ վերաբերում է հիշատակարաններին, կարծում ենք՝ պետք է «Հայ գրքում» արված խիստ սահմանափակումները վերանայել եւ մշակել հիշատակարանը մյուս նյութերից տարբերելու ընդհանուր սկզբունք, ինչը, կարծում ենք, մասամբ արել ենք: Միաժամանակ կարելի է անդրադառնալ նաեւ հետազայում արված գրառումներին՝ հետազայի հիշատակարան-հիշատակագրություններին:

Ստորեւ զուգադրում ենք «Հայ գրքում» եւ հնատիպ գրքում եղած հիշատակարանը եւ մեր վերարտադրած նախօրինակ-բնագիրը:

²⁰ Այսպես է վարվել նաեւ Ն. Պողոսյանը. տե՛ս XVI-XVII դդ. հայ հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն, ԲԵՀ, 2011 թ., էջ 22-31:

²¹ Տե՛ս Ա. Մաթեոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Երեւան, 1998, էջ 12-15, Լ. Հովսեփյան, ԺԳ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երեւան, 1997, էջ 8: Չնայած որ Ե.-Ղ. դդ. մեզ որեւէ ձեռագիր չի հասել, այնուամենայնիվ, կարծում ենք, որ սրանց զուգահեռ այդ դարերի հայերեն ձեռագիր մատյանները եւս ունեցել են վերջում գրված հիշատակարաններ:

«Հայ գիրք», էջ 34	Յիսուս Որդի, Վենետիկ, 1660, էջ 522-3	Վերծանություն
<p>Այլև պատճառ աշխատանաց մերոց այս էր որ բազում ժամանակայ յառաջ ունէի սէր եւ բարեկամութիւն հետ ազգին հայոց. եւ յարածամ ցանկայր տեսանել ըզջքեղաշուք իշխաննն հայոց խօճայ Սաֆրազըն. Զոր ոչ կարացի հասանել ցանկութեալսս իմոյ. գոր փոխեալ է առ ա[ստուա] ծ. եւ գնորահաս որդին իւր զխօճայ Վադանն:</p>	<p>Այլ եւ պատճառ աշխատանաց մերոց այսէր. որ բազում ժամանակայ յառաջ ունէի սէր եւ բարեկամութիւն հետ ազգին հայոց. եւ յարածամ ցանկայի տեսանել ըզջքեղաշուք իշխաննն հայոց խօճայ Սաֆրազըն. Զոր ոչկարացի հասանել ցանկութեանս իմոյ, գոր փոխեալէ առ աստուած եւգնորհաս որդին իւր զխօճայ Վադանն:</p>	<p>Այլև պատճառ աշխատանաց մերոց այս էր, որ բազում ժամանակայ յառաջ ունէի սէր եւ բարեկամութիւն հետ ազգին հայոց եւ յարածամ ցանկայի տեսանել ըզջքեղաշուք իշխաննն հայոց խօճայ Սաֆրազըն, գոր ոչ կարացի հասանել ցանկութեանս իմոյ, գոր փոխեալ է առ Աստուած եւ գնորհաս որդին իւր զխօճայ Վադանն:</p>

Այսպիսով՝ Հայ հնատիպ գրքի մատենագիտության վերահրատարակումը պետք է արվի համալիր մոտեցումով՝ եղած սկզբունքների վերանայումով եւ առաջարկվող նոր սկզբունքների քննությունով:

РЕЗЮМЕ

В отличие от частичной публикации по четкому принципу колофонов армянских рукописей, колофоны армянских старопечатных книг до сих пор полностью не опубликованы, а существующие публикации изданы с сокращениями, в той мере, в которой они касаются вопросов печатания, и полны целым рядом неточных прочтений, несоответствий и технических недостатков.

Эта работа является попыткой разработки принципов точного воспроизведения колофонов армянских старопечатных книг, а также разграничения понятий Колофон, Упоминание, Предисловие и других подобных единиц.

Исследование показало, что необходимо иметь новую, более полную библиографию армянских старопечатных книг, содержащую их детальное и точное описание, предварительно выработав и уточнив принцип описания, ориентируясь на опыт описания рукописей.

SUMMARY

Unlike partial publications of colophons of Armenian manuscripts according to a strict principle, colophons of Armenian printed books have not been completely published yet. Extant publications are with abridgements, as much as they are related to printing issues, and are full of a number of misreadings, discrepancy and technical deficiencies.

This work is an attempt to edit the principles of precise reproduction of the colophon texts of the Armenian printed books, as well as to differentiate such notions as colophon, reference, preface and others.

The study has shown that it is necessary to have a new and more complete bibliography of old Armenian printed books, which will contain their precise and detailed description by previously working out and precisising the principle of their description, perhaps having in mind the experience of manuscript descriptions.

